



## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

20 մարտի 2015թ.

N 65-Ս

ք.Ստեփանակերտ

**ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՍՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ  
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐ-ՄԱՐՏ ԱՄԻՍՆԵՐԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԵՎ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ  
ԱՍՓՈՓԻՉ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Ի գիտություն ընդունել ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից 2015 թվականի փետրվար-մարտ ամիսներին կազմակերպված և անցկացված մասնագիտական դասընթացների ամփոփիչ արդյունքների մասին տեղեկանքը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

## ՏԵՂԵԿԱԼՔ

### 2015թ փետրվար- մարտ ամիսներին ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների մասնագիտական դասընթացների կազմակերպման և անցկացման մասին

ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ձեռնարկվել են բավականին միջոցառումներ ընտրական հանձնաժողովների անդամների, անդամության թեկնածուների համար մասնագիտական դասընթացներ կազմակերպելու և պատշաճ մակարդակով անցկացնելու համար:

ՏարԸՀ-ների առաջարկությունների հիման վրա ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից հաստատվել է ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար մասնագիտական դասընթացներ կազմակերպելու ժամանակացույցը, իրականացվել է ըստ գոտիների տեղաբաշխումը, որի համաձայն Մարտակերտի շրջանը բաժանվել է 5, Հաղրութի շրջանը՝ 2, Ստեփանակերտ քաղաքը՝ 6, Մարտունու շրջանը՝ 4, Քաշաթաղի շրջանը՝ 9, Ասկերանի շրջանը՝ 3 Շուշի, Շահումյանի շրջանները՝ 1-ական գոտիների:

Մասնագիտական դասընթացները անց են կացվել 2015թ. փետրվարի 16-ից մինչև մարտի 14-ը, որին մասնակցել և որակավորման վկայականներ են ստացել 1277 դիմումատուներ՝ 211 համայքներից:

Հաշվի առնելով, որ դասընթացների մասնակիցների 66,3 %-ը (847 քաղաքացի) առաջին անգամ են մասնակցում մասնագիտական դասընթացների, ի տարբերություն նախորդ տարիների, դասընթացները դասախոսական կազմի կողմից վարվել են առավելապես բանավեճերի, նոր ընտրական օրենսգրքի առանձին երկիմաստություն պարունակող հոդվածների, պրակտիկայում հաճախակի հանդիպող դրվագների վերլուծությամբ, որին ակտիվ մասնակցություն են ցուցաբերել դասընթացների մասնակիցները:

Ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար մասնագիտական դասընթացները նախապատրաստվել, կազմակերպվել և անցկացվել են հրապարակայնորեն, ընթացքի մասին պարբերաբար լուսաբանվել են թե շրջանային, և թե հանրապետական զանգվածային լրատվության միջոցներով:

Որակավորում ստացած քաղաքացիներից 639-ը (50,0%) ունեն բարձրագույն, 245-ը (19,2%) միջին մասնագիտական, 393-ը (30,8%)՝ միջնակարգ կրթություն, ըստ կուսակցական պատկանելության՝ 919-ը (72,0%) անկուսակցական են, 86-ը (6,7%)՝ Արցախի ժողովրդավարական, 186-ը (14,5%)՝ Ազատ Հայրենիք, 85-ը (6,7%)՝ Հայ Յեղափոխական Դաշնակցություն, 1-ը՝ (0,1%) ԼՂ կոմունիստական կուսակցությունների անդամներ են, ըստ զբաղվածության՝ 930-ը (72,8%) աշխատում են, 347-ը (27,2%) չեն աշխատում: 503-ը (39,4%) արական, 774-ը (60,6%) իգական սեռի ներկայացուցիչներ են Ըստ տարիքի՝ 630-ը (49,3%) 18-35, 425-ը (33,3%) 36-50 և 222-ը (17,4%) 50-ից բարձր տարիքի քաղաքացիներ են:

Ընդհանուր առմամբ 2015թ. ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար մասնագիտական դասընթացներին մասնակցել և որակավորման վկայականներ են ստացել 1277 ԼՂՀ ընտրական իրավունք ունեցող քաղաքացիներ, ընդ որում՝ 847-ը կամ 66,3%-ը դասընթացներին մասնակցել են առաջին անգամ, այսինքն՝ ընտրությունների կազմակերպման և անցկացման ժամանակ տեղամասային ընտրական հանձնաժողովների գրեթե երկու երրորդը կձևավորվեն նոր անդամներից:

Հաշվի առնելով, որ որակավորման վկայականներ տրվում են 3 տարի ժամկետով, իսկ 2013-2015թթ. մասնագիտական դասընթացներին մասնակցել և որակավորման վկայականներ են ստացել 3362 քաղաքացիներ, ուստի ներկա դրությամբ բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովները կարող են ձևավորվել ընտրական օրենսգրքի դրույթներին համապատասխան:

Ամփոփ տվյալները կցվում են:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

**Ե.ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ**